

դարձ հատվածի մասին, որ ակնարկված առավելության վերա ավելանում է երբեմն և տեղին ՀՈՒՄՈՐԸ:

Վերջին երկու հատվածների մեջ հեղինակը խոսում է Պատմական թանգարանի, Մատենադարանի և թատրոնների մասին, որոնք հետաքրքրական կլինին և հաճելի, ինչպես պատմական և հինավուրց վայրերին տված այցելությունները: Զարմանալի է, որ չի խոսում թանգարանի նկարչական բաժնի մասին, որ մեր ներկա ստեղծագործության պարծանքն է:

Լեզուն հարուստ է, պատկերավոր և սահուն, ունի բազմաթիվ նորաստեղծ կամ ոչ շատ գործածելի բառեր և արտահայտության ձևեր, որ առանձին գեղեցկություն են տալիս հեղինակի գրության ոճին: Մեջ ենք բերում պատահաբար մի քանի երեսից օրինակներ ավելի հասկանալի դարձնելու համար մեր նկատողությունը:

Եր. 117, ա) «Իարձյալ սկսան հնչել մինառտանին հնամյա զանգակները լեռնասույզ զողանջներով»:

25 մայիս 1947 թ.

Անթիլիաս

ԳԵՂԵՑԻԿ ԺԵՍԹ ՄԸ

«Արև»-ը գրում է. —

Մեր ընթերցողները կհիշեն Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի Հայեպի Ս. Ք. Մանկանց եկեղեցվույն մեջ (իր հոգեկրկնական հանգիստության առթիվ) խոսած հուշակալ փայլման ճառը, որ հրատարակվեցավ, «Արև»-ի մարտ 28-ի թիվին մեջ: Այդ ճառին վերջաբանի մեջ Վեհափառը կհայտարարեր թե ուներ հրատարակելի երեք երկասիրություն, յուրաքանչյուրը 1000 տպագրյալ էջոց, և կոչ կըներ, որ հայ մշակութին բարեկամ հայ անհատներ օգնեն իրեն առնց տպագրության համար:

բ) «Այդ ժայռափոր հազարամյա ու խորհրդաշող կամաբեհույն տակ, որ աղոթքի հիմեր հայրերը, համակվեցա անասելի վեհության զգացումով»:

գ) «Անոնք (ժողովուրդը) կձայնակցեն իկեղեցականներու և տիրացուներու երգեղողության, որ արձագանք կուտար Ազատ դեպի հովտին և լեռներուն մեջ»:

Եր. 118. «Բայց կհավատա Աստուծո նախախնամությանը բույր, լույս ու ժպիտ մանանայի (տպված է մամոնայի) հանգույն պիտի իջնեն մեր երկրի և ժողովուրդի վրա»: Այս խոսքերն է դրել մեր բերանում Գեղարդում խոսած քարոզի բովանդակությունը հիշած ժամանակ: Կարելի է նման միտք արտահայտել ենք, բայց ոչ այդպիսի գեղեցիկ պատկերավորությամբ:

Դերենիկ Եպիսկոպոսի այս գիրքը ոչ միայն օգտակար կլինի ընթերցողներին, այլ և վայելք կպատճառե, ինչպես գեղարվեստական մի վեպ, մանավանդ, որ զարդարված է բազմաթիվ պատկերներով:

Արդ, Մոսուլի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Մեսրոպ քհն. Օրջանյան նամակով մը կտեղեկացնե մեզի, թե Մոսուլի թաղականության մնայուն առնանալետ տղաք. Գր. Աստարճյան կարդալով այդ ճառը, ինքնաբերաբար հանձն առած է հոգալ այդ երեք հսկա հատորներուն ծախսը և այդ իմաստով գրած է Վեհափառ Հայրապետին: Ծնորհավորության արժանի ժեսթ մը, որ կրնա որպես հետևելի օրինակ ծառայել ուրիշ ազգայիններու:

Արվեստագետ Ա. ՖԵՏԿԱՃՅԱՆ

ԻՄ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ

Բոլոր այն հայերին, որ կարող են և պիտի ուզեն արտահայտվիլ այսու հայտնածս որոշումիս մասին, կանխավ կհայտնեմ շնորհակալություն:

Աշխատավորս՝ անցած հոկտեմբերի առաջին օրը թևակոխած հասակիս 83-րդ տարին, դեռ այնքան խանդավառ եմ արվեստին սիրով, որքան և որպես որ էի 25—30 տարեկան եղածս ժամանակ:

Ինչքան էլ դեռ չեմ տեսներ օրերիս վախճանը, բայց և շատ հասկանալի է, որ երկարակեցության մոտավորապես սովորական տևողությունը տասնյակ տարիներով պիտի անցած մեկը, որպիսին ես եմ, չեմ կարող